թեմք ի Տեառնէ զխուլին առատաձեռնել Ձեզ զփոխարինութիւն, զի քաջողջիկ կենօք ընդ երկար վայելեսջիք զպաշտօն խնամակալութեան Գպրոցին ի մխիթարութիւն սրտի Ձերոյ, եւ զհոգիս բարեպաշտուհի կողակցին Ձերոյ եւ որդւոյդ սիրելւոյ եւ համայն արենակից ննջելոց Ձերոց ի Քրիստոս՝ արժանի արասցէ անպատում փառաց երկնից սուրբ Արքայութեան։ .

«Ողջ լերուք եւ օրհնեալք յԱստուծոյ եւ յամենայն սրբոց նորա եւ ի մէնջ։ Ամէն։

«Գրեցաւ Կոնդակս Հայրապետութեան յամի Տեառն հազարերորդի ութհարիւրերորդի եօթանասներորդի և եօթներորդի, և Հայոց ՌՅԻԶ, ի վեշտասաներորդ ամսեանն Դեկտեմբերի, ի Հայրապետական Աթոռ Հայաստանեայց ի Ս. Էջմիածին ի Վաղարշապատ: Թ. 364:»

## ԴԱՎՐԻԺԷՆ ՆՊԱՍՏ.

Յանցելումն՝ պատերազմական անցից պատճառաւ Հին—Պաեազիտէն եւ մերձակայ մի քանի գիւղերէն ի Պարսկաստան Սալմաստ գաւառի Մակուայ կողմերը երեք հարիւրի չափ Հայ գերդաստանք գաղթած էին, որոց թշուառ վիճակին թեթեւութիւն եւ մխիթարութիւն տալոյ գեղեցիկ եռանդեամբ եւ բարեգործութեամբ՝ Դավրիժաբնակ մեծագնեայք եւ տեղական անգղիական հիւպատոսի ձեռամբ Եւրոպացի գաղթականներէն նշանաւոր անձինք՝ Գեր. Առաջնորդ Անդրէաս Արքեպիսկոպոսի հրաւէրը եւ յորդորը սիրալիր ընդունել են, եւ մի եօթնեկի մէջ 3626 Պարսդրան (իբր 1084 ռբլ. 15 կպ.) նըպաստ հանգանակուեր է, զորս Գեր. Առաջնորդն փութացուցեր է կարօտ Հայոց մատակարարելու ըստ արժանւոյն։

Յաջորդ թերթով յիշեալ Արքեպիսկոպոսի յայտարարութիւնը եւ նուիրատուաց ցուցակը հրատարակել արժան կհամարիմք։

## ԿՈԼՈՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ.

Կոլոս (Զայն) Ռուսերէն պատուական լրագրի խմբագրութիւնն յանուն եւ ի նպաստ գաղթեալ Բագրեւանդցի Հայոց եօթանասուն և չորս ռբլ. 50 կոպ. նուէր հանգանակեալ յղեց առ Վեհ. Հայրապետ Ազգիս, որոյ համար յատուկ շնորհակալութիւն կյայտնեմք յիշեալ լրագրի խմբագրութեան գովելով նորին գեղեցիկ՝ բարի զգացումը եւ առաքինասէր նպատակը։

## Գ. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ.

Ախալքալաքցի Մեծարգոյ Գ. Ստեփաննոս Վարդանեան ի նպաստ ճեմարանի Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի եւ Բագրեւանդցի գաղթեալ Հայոց հարիւրական (ամենը 200) ռբլ. նուիրեց, որոյ համար յատուկ շնորհակալութիւն կյայտնեմք եւ կհրատարակեմք ի տեղեկութիւն մերազնէից՝ գովելով միանգամայն յիշեալ բարեպաշտ անձի ջերմեռանդութիւնը։